Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
օգոստոսի 22-ի N 1348 - Ն որոշման

«Հավելված N 9
ՀՀ կառավարության 2020 թվականի
դեկտեմբերի 3-ի N 1976-Ն որոշման

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿԱՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴԱՏԱՐ ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՍԿԻՉ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենան ծրագրային ապահովում է, որը հնարավորություն է ընձեռում էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պատվերների ձևակերպման և ուղևորափոխադրումների, ինչպես նաև կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման գործարքների համար գեներացնելու էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի (այսուհետ՝ էլեկտրոնային ՀԴՄ) էլեկտրոնային կտրոն:

2. Էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պատվերների ձևակերպման և ուղևորափոխադրումների, ինչպես նաև կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման դեպքում էլեկտրոնային ՀԴՄ-ի կիրառությունը պարտադիր է:

3. Սույն հավելվածի 1-ին կետում նշված՝ ուղևորափոխադրումների իրականացման դեպքում հաշվարկները կատարվում են միայն հարկային մարմնում գրանցված էլեկտրոնային ՀԴՄ-ի միջոցով:

4. Էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պատվերների ձևակերպման և ուղևորափոխադրումների, ինչպես նաև կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման դեպքում էլեկտրոնային ՀԴՄ-ն հարկային մարմնում գրանցելու դիմում չի ներկայացվում: Սույն հավելվածի 6-րդ կետով սահմանված պարտադիր վավերապայմաններին բավարարող առաջին էլեկտրոնային ՀԴՄ կտրոնի գեներացումը համարվելու է էլեկտրոնային ՀԴՄ-ի գրանցում:

5. Էլեկտրոնային ՀԴՄ-ն պետք է ապահովի՝

1) հարկային մարմնի կողմից հաստատված հատուկ ձևաչափով տեղեկատվական համակարգի հետ աշխատանքը.

2) յուրաքանչյուր գործողության պատմության պահպանում, առնվազն 5 տարվա ընթացքում.

3) էլեկտրոնային ՀԴՄ-ի միջոցով ՀԴՄ-ի կարգավիճակը փոփոխել «Գործողությունից հանված» կարգավիճակի:

6. Էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պատվերների ձևակերպման և ուղևորափոխադրումների, ինչպես նաև կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման դեպքում էլեկտրոնային ՀԴՄ-ն հնարավորություն է ընձեռում գեներացնել էլեկտրոնային ՀԴՄ-ի էլեկտրոնային կտրոն, որը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները (տվյալները)՝

1) էլեկտրոնային ՀԴՄ կիրառողի անվանումը (կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական տեսակի հապավումը, անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը).

2) էլեկտրոնային ՀԴՄ կիրառողի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), իսկ էլեկտրոնային կտրոնը կազմակերպության ներկայացուցչին, անհատ

ձեռնարկատիրոջը կամ նրա ներկայացուցչին, նոտարին կամ նրա ներկայացուցչին տրամադրելու դեպքում՝ նաև համապատասխանաբար ծառայություն ստացող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

3) էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պատվերների ձևակերպման դեպքում այդ կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական տեսակի հապավումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

4) էլեկտրոնային ՀԴՄ-ի գրանցման համարը (ԳՀ).

5) էլեկտրոնային կտրոնի գեներացման վայրկյանը, րոպեն, ժամը, օրը, ամիսը, տարին.

6) ծառայության անվանումը և կոդը.

7) ծառայության գումարը.

8) վճարման տեսակը.

9) ֆիսկալ համարը.

10) հարկային մարմնի կողմից սահմանված ձևաչափով QR կոդը:

7. Էլեկտրոնային ՀԴՄ-ի միջոցով գեներացվող կտրոնի վրա գրանցվող տեղեկությունները պետք է լինեն հայերենով:

8. Էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից պատվերների ձևակերպման և ուղևորափոխադրումների, ինչպես նաև կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման դեպքում էլեկտրոնային ՀԴՄ-ն հնարավորություն է ընձեռում ձևակերպել էլեկտրոնային ՀԴՄ կտրոնի վերադարձ: Վերադարձ տեսակի կտրոնը պետք է պարունակի վերադարձվող կտրոնի ֆիսկալ համարը, գեներացման վայրկյանը, րոպեն, ժամը, օրը, ամիսը, տարին, «Վերադարձ» նշումը: Սույն կետում նշված դեպքում մասնակի վերադարձ չի իրականացվում, վերադարձն իրականացվում է ամբողջությամբ:

9. Օրենսգրքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ սույն հավելվածին համապատասխան ուղևորափոխադրումների իրականացման դեպքում՝ էլեկտրոնային ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում է դիտվում՝

1) էլեկտրոնային ՀԴՄ-ի էլեկտրոնային կտրոն չգեներացնելը.

2) ստացված ծառայության արժեքը չմուտքագրելը կամ այդ արժեքից ցածր արժեք մուտքագրելը.

3) էլեկտրոնային ՀԴՄ կտրոնի վրա սույն հավելվածի 6-րդ կետում նշված որևէ տեղեկության բացակայությունը:

10. Օրենսգրքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ սույն հավելվածին համապատասխան ուղևորափոխադրումների իրականացման դեպքում՝ էլեկտրոնային ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում չի համարվում գեներացված էլեկտրոնային ՀԴՄ կտրոնի չփոխանցելը ծառայություն ստացողին:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ